Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

## ՔԱՅՈՒԽՄ 1876 ԱՄԻՆ

## ՆԻՍՏ Ե,

18 ՅՈՒՆԻՍ 1876




ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

1876

## ԴԻՒԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

### ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

| | | | |
|---|---|---|---|
| Ստեփան Ասլանեան | փաշա | Ա. | Ատենապետ |
| Ռուսինեան | էֆէնտի | Բ. | » |
| Տիգրան Եուսուֆեան | էֆէնտի | Գ. | » |
| Գաբրիէլ Ց. Մ[illegible]եան | » | Ա. | Ատենադպիր |
| Համբարձում Ս. Ալլահվերտեան | » | Բ. | » |
| Սամուէլ Ալթուն Տիւրրի | » | Գ. | » |

### ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Յովհաննէս Ք. Մկրեան
Տ. Գրիգոր Ք. Աճէմեան
Սարգիս Ազարէկեան էֆէնտի

### ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Յովհաննէս Նուրեան էֆէնտի
Գէորգ Սոխոմոնեան »
Պօղոս Պառնասեան »

### ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻՒԱՆ

Յովհաննէս Ա[illegible]եան էֆէնտի
Ստեփան Պէշիկթաշլեան »
Յակոբ Քազազեան »

### ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տիգրան Եուսուֆեան էֆէնտի
Օգուէն Խօճասարեան »
Նազարէթ Շահպազեան »

### ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Համբարձում Մազպալեան էֆէնտի
Եղիազար Մնձիկեան »
Յարութիւն Մէրճէմ-Գոլի »

### ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Ներսէս վարդապետ Արլանեան
Կարապետ Շահպազեան էֆէնտի
Նշան Քազազեան »

### ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Միքայէլ Մամիկոնեան էֆէնտի
Ռուսինեան »
Սամուէլ Ալթունեան »

### ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Կարապետ Իւթիւճեան էֆէնտի
Պետրոս Քէրէստէճեան »
Ստեփան Փափազեան »

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

## ԲԱՑՈՒՄ 1876 ԱՄԻՆ

## ՆԻՍՏ Ե.

18 ՅՈՒՆԻՍ 1876

ՆԱԽԱԳԱՀ. — ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

#### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

1. Խորէն Արքեպիսկ. Նար Պէյ Բ. Պ
2. Կարապետ Եպիսկ. Սեդրաքեան
3. Մատթէոս „ Իզմիրլեանց
4. Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց
5. Գարեգին „ Թաթարեան
6. Խորէն „ Կիրոյեանց
7. Հմայեակ „ Դիմաքսեան
8. Յովհաննէս „ Փափազեան
9. Ներսէս „ Ալլահեան Բ.
10 Պօղոս „ Խօլասեան
11. Եղիշէ „ Ալաճաճեան
12. Աստուածատուր Ք. Մամբրէեան
13. Գէորգ Արշակունի Բ.
14. Գրիգոր Աճէմեան
15. Խորէն Փէշտիմալճեան
16. Յարութիւն Սերոպեան
17. Յովհաննէս Մկրեան
18. Սուքիաս Սան[illegible]եան
19. Սահակ Տ. Սարգսեան
20.

#### ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

*Գումգափու, Ղէտիկ փաշա և Գումգափուի դուռ*

21. Գրիգոր Պէրպէրեան

Բ. Բացակայութիւն առաջին ։

Բ. Պ Բացակայութիւն բանաւոր պատճառաւ ։

22. Գէորգ Սոխոմոնեան Բ.
23. Խաչիկ Մանկասարեան Բ. Պ
24. Կարապետ Ագարեան
25. Համբարձում Մազպալեան
26. Միհրան Գասպարեան
27. Յովհաննէս Խորասանճեան Բ. 3
28. Յովհաննէս Պոյաճեան
29. Յովհաննէս Սուրէնեան
30. Ն. Մէզպուրեան Տօքթօր Բ.
31. Պօղոս Պառնասեան
32. Ռուսինեան
33. Սարգիս Ազարէկեան
34. Սահակ Աբրօ
35. Սենեքերիմ Մանուկեան Բ. Պ
36. Փէշտիմալճեան Տօքթօր Բ. 2
37.

(Բ. Վիճակ)

*Պէշիկթաշ*

38. Բարսեղ Հայրանեան
39. Կարապետ Ս. Իւթիւճեան
40. Յարութիւն Մարգարեան Բ.

*Եէնիգափու*

41. Խաչատուր Ղազարոսեան Բ. 2
42. Կարապետ Գ. Փափազեան Բ. Պ
43 Մարուքէ Յենիկեան Բ. 2
44.

*Իւսկիւտար Ս. Խաչ*

45. Յովհաննէս Շաշեան
46. Յովսէփ Ս. Մազլըմեան Բ. 2
47. Սերովբէ Պօղոսեան
48. Ստեփան Ասլանեան

*Իւսկիւտար Ս. Կարապետ*

49. Միհրան Պալճեքարեան Բ. 2
50. Յովհաննէս Ճէլալեան
51. Նիկողոս Ալամանեան Բ.
52. Տրդատ Փափազեան

(Գ. Վիճակ)

*Բերա և Գասըմ փաշա*

53. Արիկ Ռուսեան
54. Գրիգոր Սէլիմեան
55. Մարտիրոս Յ. Տէրեան
56. Միքայէլ Մամիկոնեան Բ. 2
57. Նշան Քազազեան
58. Ստեփան Խօշքեան Բ.
59. Տէլեմաք Մ. [illegible]
60. Իլիաս Զօհրեան
61. Յարութիւն Նորատունկեան
62. Գրիգոր Մարգոսեան Բ. Պ

*Միջագիւղ*

63. Կարապետ Պ. Պէրպէրեանց Բ. Պ
64. Յակոբ Կոստանդեան Բ. Պ
65. Յակոբ Պ. Նորատունկեան
66. Յովհաննէս Ազապեան
67. Տիգրան Եուսուֆեան

*Պէյքոզ և Ղանլըճա*

78. Յարութիւն Մէրճէմ—Գոլի

(Դ. Վիճակ)

*Ղուզկունճուք և Իճատիէ*

69. Յովհաննէս Լուսեան
70. Ստեփան Պէշիկթաշլեան Բ.

Գառըգիւղ

71. Կարապետ Շահպազեան
72. Մկրտիչ Մուրատեան Բ. Պ

Նարլըգափու

73. Յակոբ Էմմէքճեան

Եէնիմահալլէ Սամաթիոյ

74. Օհան Խօճասարեան

Թոփգափու

75.

Էյուպ Ս. Եղիա եւ Ս. Աստուածածին

76. Գաբրիէլ Յ. Մելիքեան

Գուրուչէշմէ

77. Աւետիս Խըրխաչեան

Հիսար եւ Պոյաճի գիւղ

78. Յովհաննէս Նուրեան

Նոր գիւղ եւ Ստէնիա

79. Ղազար Հովեան

Պէյքոզ

80. Աստուր Գուճասարեան Բ. 2
81. Մկրտիչ Գ. Լեւոնեան Բ. Պ
82. Յովհաննէս Կրճիկեան

Քարակիւմրիւկ

83. Յարութիւն Ջինճիրճեան
84. Յարութիւն Գ. Տատեան Բ. Պ

(Ե. Վիճակ)

Սամաթիա

85. Ալէքսան Պէշիրեան
86. Աւետիս Քոլոլեան Բ. 2
87. Եղիազար Մելիքեան Բ. 3
88. Մինաս Ջամճամեան
89. Յակոբ Քազազեան
90. Յակոբ Աճեմեան Բ. 2
91. Նազարէթ Շահպազեան
92.
93.
94.

Խասգիւղ

95. Առաքել Ալթըն Տէրրի
96. Խաչատուր Պ. Միսաքեան
97. Ռէթէոս Պէյլիկճեան Բ.
98. Սարգիս Արապեան Բ.
99. Սարգիս Աբրահամեան
100. Սիմոն Միքայէլեան Բ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

Իզմիր

101. Մանուկ Աւետեան

Բերգամա

102

Ադրիանուպոլիս

103. Ռուբէն Կիւմիւշկէրտանեան Բ. Պ

Նիկոմիդիա

104. Տիգրան Կիւմիւշկէրտանեան

Ակն

105. Պետրոս Միսաքեան

Ղարահիսար

106.

Արաբկիր

107. Կարապետ Խաչիկեան Բ.

Բաղէշ

108

Պրուսա

109. Քրիստոստուր Ղազարոսեան

Եւդոկիա

110. Մելքոն Հայրենեան

Ամասիա

111. Համբարձում Ալաճաճեան Բ.

Բաֆրա

112. Յովհաննէս Աղնաւորեան

Եդեսիա

113. Յակոբ Իւթիւճեան

Մանազկերտ

114.

Հաճըն

115.

Երզնկա եւ Բաբերդ

116.

Թէքիրտաղ

117. Տիգրան Գ. Աբեանեան Բ.

Կեսարիա

118 Մատթէոս Մ. Այվազեան Բ. Պ

Խարբերդ

119. Յովհան Եազճեան

Պալըքեսէր

120. Յովհաննէս Յովակիմեան

Մուշ

121. Սահակեան Պ. Պ. Փափազեանց

Տիվրիկ

122.

Զէյթուն եւ Մարաշ

123.

Տրապիզոն

124.

Պայաս

125.

Տիգրանակերտ

126. Թադէոս Թէրզեան Բ.

Վան

127. Սիմոն Մարգարեան Բ. 2

Աղթամար

128.

Հալէպ եւ Այնթապ

129.

Սեբաստիա

130. Մկրտիչ Մելիքեան

Ռուսճուք

131.

Կարին

132. Աբրահամ Յ. Այվազեան

Չմշկածագ

133. Համբարձում Սարըքէշեան

Գաղատիա

134

Ատանա

135

Սղերդ

136. Մատթէոս Ալիքսանեան

Եոզղաթ

137. Լոթֆիկ Պալըզեան Բ. Պ

Մալաթիա

138.

Իզմիր

139.

Եգիպտոս

140

# ՕՐԱԿԱՐԳ

Ա. Ընթերցումն Վաւերական ժողովոյ
Բ. Վերաքննութիւն Սահմանադրութեան. — Վիճաբանութիւն Ի. յօդուածոյ վրայ, որ է Թաղական մատակարարութիւն։

——————

## ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատենը բացուեցաւ ժամը 7 ½ին ի ներկայութեան 60 երեսփոխանաց, որոց վերջին թիւն 75ի յանգեցաւ։

Նախընթաց երկու նիստերու ատենագրութիւնները թէեւ խմբագրուած եւ ժամանակին ատենապետին յանձնուած, սակայն ատենադպիրը ի բաց եկած չըլլալով, այսօր դիտողութեան եւ վաւերացման չկրնալ ուղղուիլն Ատենապետ փոխանորդը ծանուցանելէն ետեւ անցաւ ատենական աւուր գործողութեանց։

### Ա.

### Բացակայութիւն

Ատենապետ փոխանորդ՝ բացակայ երեսփոխաններէն անոնց՝ որ նամակաւ իրենց բացակայ գտնուելնին յայտնած էին, անուանքն ժողովին հաղորդելէն ետեւ, որք են՝

Տ. Խորէն Արքեպ. Նար-Պէյ
Կարապետ Էֆէնտի Փափազեան
Ռուբէն " Կիւմիւշկէրտան

Նշանակել տուաւ ներկայութեան տումարին մէջ։

Ատենապետ փոխանորդ յաւելլելով նաեւ թէ Կիւմիւշկէրտան Էֆէնտին իր բացակայութեան նամակին մէջ այսօրուան կատարուելիք Կրօն. ժողովոյ ընտրութեան մասին ալ դիտողութիւններ յարած է, յայտնեց թէ երբ կարգը գայ, նոյն դիտողութիւններն ալ եթէ ժողովն ուզէ լսել, պիտի կարդացուին։

### Բ.

### Հրաժարական

Ատենապետ փոխանորդ՝ վերջին նիստին ժողովէն ընդունուած արտօնութեան համեմատ ատենիս ազդարարութեան քանիցս անգամ կրկնուելով բացակայ գտնուող երեսփոխանաց ոմանց՝ որոց կարգէն էր նաեւ Տրապիզոնի գաւառին երեսփոխան Կիւրճեան Մկրտիչ Էֆէնտի, մանաւանդ գրած ըլլալը յիշելէ ետեւ, Կիւրճեան Էֆէնտիէն պատասխանագիր մը եկած ըլլալը ծանուցանելով՝ կարդաց զայն ի լուր ժողովին, որ է՝

Վսեմաշուք Ս. Փաշա Ասլանեան
Ատենապետ Ազգ. Երեսփոխանական ժողովոյ

Երեք անգամ ատենիս պաշտօնի պատրուակին ժողովէն բացակայ եղող երեսփոխան մը

ըստ կանոնի հրաժարելու վճռուած է աշխատաւորի որ եմ ,

Տէր իմ , ի սկզբան փոխանորդութեան ատենի շնորհ մը թիւ 8 , և յունիս 15 թուականով ուղղած հրաւիրագրերնիդ առի որ արժանիքէս խիստ բարձր էր , և այս բարձրութիւնն ալ վայելելու պատասխանելով իմին շնորհակալութիւնս կը մաղթեմ ,

Իսկ իբրև անձեռն ազգիս և խղճի մտօք կը բաղձամ արժանաւորագոյնի մը ընտրութիւնը ըլլայ , և այսպիսեաց յանձնառութեամբը կրնայ ազգային ինչ ինչ ծանր և միանգամայն փափուկ խնդիրներուն դարման տարուիլ . Տէր իմ կը տեսնէք ներկայիս որ հոս արտասանութեան մէջ տկար եմ , մանաւանդ գործոյն ալ այդ է ,

Այս ներելով ինձ որ կ'համարձակիմ երկտողիս ձեր բարձրութեան ներկայանալ ի սէր ճշմարտութեան պարտքերս կատարեմ ,

Մնամ ձերդ նուաստ ծառայ ,

18 Յունիս 1876 ՄԿՐՏԻՉ . Յ . ԿԻՒՐՃԵԱՆ
Կ . Պոլիս

Ատենապետ փոխան' Կիւրճեան էֆէնտիի այն գրութեան խնդիրը հրաժարական ըլլալը յայտնելով , իբր հրաժարագիր քուէի դրաւ , որ ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ ,

## ՕՐԱԿԱՐԳ

### Ա.

Քննութիւն վարչութեան կրօն. ժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ .— Օրակարգնիս կը պահանջէ Կրօն . ժողովոյ ընտրութեան ձեռնարկել . Այս ընտրութիւնն ըստ Սահմանադրութեան Եկեղեցական Համ . Ժողովէն պատրաստել եռապատիկ ընտրելեաց ցանկին վրայ պիտի կատարուի , և արդէն այդ ցանկն ալ պատրաստուած և թէև տպարանէն ալ հասած է , բայց կարծեմ թէ ամեն որ նոյն ցանկին տպագրելու օրինակներէն մէկ մէկ հատ առած է արդէն . առաջ կը հրաւիրեմ երեսփոխաններդ' որ Կրօն . ժողովոյ ընտրութեան համար իրենց քուէները պատրաստեն , ընտրելեաց ցանկէն 14 անուն միայն գրելով' առանց դրուէն աւելի անուն խառնելու , ինչպէս որ Սահմանադրութիւնը կը պահանջէ ,

ՄԵՐՃԷՄ-ԳՈՒԼԻ Յ . ԷՖ . — Ընտրելեաց ցուցակն ըստ որում հրաւիրագրաց հետ մեզ հաղորդուած չէ , մինչդեռ պէտք էր դրկել այսպիսի ընտրութեանց համար , կառաջարկեմ որ այս անգամ եղածը բաւական սեպուելով' ուրիշ անգամ օրինակ չըլլալու պայմանաւ , Կրօն . ժողովոյ ընտրութիւնը կատարուի ,

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . —Մէրճէմ-Գուլի էֆէնտիին դիտողութիւնն իրեն դիւանի կողմէն պատահած պակասութեան մը ակնարկութիւն , հարկ կը համարիմ անպատասխանի չթողուլ և յայտ առնել ժողովին թէ ատենագրութիւններըն և ընտրելեաց ցուցակ , ամեն բան ժամանակին պատրաստուած են , և մանաւանդ Ատենադպիր էֆէնտիին ալ յանձնարարութիւն ըրած եմ առանց տպագրութիւնը չը յապաղելուն և ժամ մ'առաջ երեսփոխանաց ձեռքը հասնելուն խնամ տանիլ . պէտք ըլլայ նէ՝ նաև գրասենեակ մայրն ալ հոգ տանելու պայմանաւ . Իրօք ալ խնամ տարած է Ատենադպիր էֆէնտին , սակայն գժբաղդաբար չգիտեմ տպագրիչին անհոգութենէն , կամ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան անկարողութենէն և կամ մեր Ատենադպիր էֆէնտիին անձնական զբաղմանց պատճառաւ ոչ երկու ատենագրութիւնք' որ տպագրութեան ներքև են , և ոչ ալ ընտրելեաց ցուցակը հնար եղած է առ որ յառաջ հրատարակուիլ և երեսփոխանաց դրկուիլ . Ես ընտրելեաց ցուցակն այժմ գրասեղանիս վրայ առաջին անգամ գալով տպագրեալ . Թող Ատենադպիր էֆն . բացատրէ թէ ինչո՞ւ այսպէս եղեր է տպարանը ,

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ . — Ես այսչափ կրնամ թէ Պ . Նալի ատենագրութիւնն արդէն 9 օր առաջ յանձնած եմ տպարանը . առաջին փորձին սրբագրութեան համար երբ տպարանէն ինձ



հասաւ , անմիջապէս սրբագրելով դրկեցի , և կարծեմ որ տպարանն երկրորդ փորձն ալ դրկէ ինձ . մինչև երէկ առաւօտ ի զուր սպասելէս ետև նամակ գրեցի տպագրապետ Ս . Միքայէլեան էֆէնտիին , և երէկ իրիկուն աս պատասխանն առայ .

Մեծապատիւ Էֆէնտի Ատենադպիր Ազգային ժողովոյ .

Ճիշդ է որ Պ . Նալի ատենագրութեան ձեռագիրը ութ օր առաջ դրկուած է ի տպարան , բայց Պատրիարքարանի մէջ կը երևի շարաթէն աւելի է որ վճարուած բան չէ տպարանին , որ բոլորովին հակառակ է իմ սակարկութեանս : Տպարանները ապառիկ սակարկութիւն չեն կրնար ընել : Մանաւանդ այս ժամանակին մէջ , որ ամէն բան կանխավճար է , ատենագրութեանց համար սպասել գինը ճիշդ իր ծախքերն են , գրեթէ ծախքերը չեն վճարուած , ես մէկ տարուան միջոցին մէջ 18000 դրշի տպագրութիւն ըրած եմ Պատրիարքարանին և մինչև այսօր հազիւ 6000 դրուշ ընդունած եմ , 12000 դրշէն աւելի կը պահանջեմ : Ազգ . ատեանին ներկայ վիրաւորանքը աւելի կը նեղեն զիս , այնպէս որ ինձ յանձնուած գործերն թղթերն առնելու անկարող վիճակի մէջ կը գտնուիմ , և ասոր այս անգամ ատենագրութիւնը չպիտի հասնի ժամանակին ,

Ձերդ

16 յունիս 1876 Ս . ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Նմանապէս' ընտրելեաց ցուցակին համար Դիւանապետ էֆ . ին գրած էի որ օր առաջ կամ ինձ հասցնէ և կամ ուղղակի տպարան դըրկէ տպուելու համար . Դիւանապետ էֆն . ալ տպարան դրկեր է դայն ժամանակին , բայց տպարանն ուշ հասուցած է ,

Կը տեսնէք' ուրեմն , որ թէև այս անգամ ժողովին տպագրական գործոց մէջ այսպիսի յապաղում մը յառաջ եկած է , սակայն իրաց ներկայ վիճակին նայելով' կրնայ թէ շատ անգամներ ալ այդպիսի անձնական այս կերպ յապաղումներ ,

ԻՒԹԻՒՃԵԱՆ Կ . ԷՖ . — Ընտրելեաց ցուցակին վրայ ես ալ իմ դիտողութիւն պիտի ընեմ , Այս առաւօտ երբ Ս . Պատրիարք Հօր առանձինն հարցուցի թէ ինչո՞ւ ցուցակները չը դրկուեցան երեսփոխանաց , պատասխանեց թէ դիւանապետէն տեղեկացէք : Ասոր վրայ դիւանապետ Թովմաս էֆ . ին հարցուցի . նա պատասխանեց թէ Կրօն . ժողովոյ ընտրելեաց ցուցակին համար հրաման չեկաւ մեզի Ընդհ . ժողովոյ դիւանէն ,

ՄԵՐՃԷՄ-ԳՈՒԼԻ Յ . ԷՖ . — Ես ըսի որ այս անգամ եղածը եղած է , և բաւական է որ ապագային համար օրինակ չլլան . աւելի ինչ հարկ կայ խօսքն այսչափ երկարել ,

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ . ԷՖ . — Կուզեմ հարց հարցում մ'ընել Դիւանին թէ մէկ ատենագրութիւնը քանի՞ դրշով կրնայ ելնել . ասի Վարչութեան կողմէն երեսփոխանութեան դէմ անպատուութիւն մ'է , որ ամիսը քանի մը հարիւր դրուշ այս ժողովին համար ծախք ընելու տեղ չգտնուին ատենագրութեան մէջ անցընել կը խնայուի . մինչդեռ Պատրիարքարանի մէջ ազդեցութեամբ պաշտօններ ստեղծուած և 6-7 հազար դր . ամսականով պաշտօնեաներ յանձնուած են . ես կրնամ ապացուցանել զայս թէպէտ Դիւանը բնութեան առնել յօժարի . մինչև իսկ' թէպէտ ուզէ , կրնամ անուն տալ ,

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Եթէ կը ներէք , նորընտիր Քաղ . ժողովոյ օրով առանց ամէնը կուզուին ըսելով զգենը այս միջոցէն և անցնինք Օրակարգին :

ՌԱԶՄԱԹԻՒ ՁԱՅՆԵՐ . — Այո՛ , այո՛ ,

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ուրեմն Կրօն . ժողովոյ ընտրութեան կանցնինք , բայց նախ կը հարցընեմ որ Կիւմիւշկերտան էֆ . ի գրաւոր դիտողութիւնն' ըստ որում կարգն եկաւ , կուզէ՞ք որ կարդացուի :

ԱՄԵՆՈՒՍՏ ՁԱՅՆԵՐ . — Այո՛ , այո՛ ,

Հետևեալն Դիւանը կարդաց Կիւմիւշկերտան էֆ . ի գրաւոր դիտողութիւնն , որ է՝

ոչ ուրիշ բանի մը. եթէ ասոր վրայ դիտողութիւն ընելու համար Համագումար Ժողովոյ ատենագրութիւնն ունենայինք մեր աչքին առջև, թերևս կրնայինք մեր դիտողութիւնն այն ատտեն յառաջ տանիլ, մինչև հանիլ այնպիսի եզրակացութեան մը՝ որով հարկ լինէր մերժել ընտրելեաց ցանկը...

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — [Ընդմիջելով] Ի՞նչ ըսել է մերժել, գիտե՞ք թէ մերժման հետևանքն ինչ է:

(Աղմուկ)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կաղաչեմ լռեցէք, ընդմիջումներ մի ընէք.

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Յ. ԷՖ. — [Շարունակելով] Խօսքիս թելը ձեռք կառնում եզրակացնելու համար թէ քանի որ Համ. Ժողովոյ հարքը կը յայտարարեն որ խղճով և համոզմամբ քուէարկած են այս ցանկը. և ես նաև յառաջ կերթամ ըսել թէ Համ. Ժողովոյ անդամներն եթէ իրենց մէջ միաբանելով խել այս ցանկը չինեն և քուէարկեր են, քանի որ ասի սրախօսութիւն մը չէ և խարդախութիւն մը չհամարուիր, մեզի համար այս ցանկն օրինաւոր է և ընդունելի: Ասոր մէջ նուազ և առաւել արժանեաց ալ եղեալներն իրարու հետ համեմատելով՝ որոնք որ աւելի արժանաւոր են՝ զանոնք կրնանք ընտրել. եթէ մէջերնուս մէկը առաջարկին կասկած ունի թէ այս ցանկին պատրաստութիւնը խարդաւանօք եղած է, այս կասկածն ունեցողը թող քուէ չտայ. բայց ես պատրաստ եմ այս ցանկին վրայ իմ քուէս տալ և կրնամ ասոր մէջ 20 հատ արժանաւոր անուն գտնել: Ուստի քանի որ այսչափ արժանաւոր անձինք կը գտնուին այս ցանկին մէջ, ընտրենք Կրօն. Ժողովը և վերջացնենք:

Ահա այս է իմ առաջարկութիւնս:

ԽՕՋԱՍԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կրօն. Ժողովոյ ընտրելեաց ցանկին խնդիրը բացատեայ երկու դիտողութեամբ, որոց մէկը Կիւմիւշկերտան էֆ. ի կողմէն գրով եղած էր, և կարդացուեցաւ, իսկ միւսն ալ Պասմաճեան էֆէնտիին է զոր ինք բերնէն խօսեցաւ: Այս չեմ ուզեր հաստատել որ այս երկու երեսփոխաններն ալ իրենց դիտողութեանց հիմ ունեցան ներքին և արդարացի պատճառներ. իմ հաւատքս այն է որ երկու երեսփոխաններն ալ առաւել բանաստեղծութեան միջոցաւ եղած են քան թէ իրաւասութեան հետեւած այս պարագային մէջ: Մեր հիմա խնդրոյն իրաւունքին կուգէ ըսենք. բաւ եղաւ թէ Ազգ. Ժողովս իրաւունք ունի Կրօն. Ժողովոյ համար ներկայացեալ ընտրելեաց ցանկը մերժել. նոյնպէս ըսող ալ եղաւ թէ իրաւունք չունի մերժել: Մեր ենթադրելով որ իրաւունք ունինք մերժել, տեսնենք թէ արդէ՞ք ինչ կը ծագի. յայտնի է թէ մեր սահմանադրական ընտրութիւններուն ինչ կերպով կըլլան, օրինակի համար թաղի մը երեսփոխանը պիտի ընտրուի, այս ընտրութեան արդիւնքը պիտի գայ, միթէ պիտի կրնա՞նք անոր վրայ դիտողութիւն ընել և ըսել թէ ինչո՞ւ աւելի արժանաւորները դուրս մնացեր են և չեն ընտրուեր: Ինչպէս որ Համ. Ժողովոյ ցանկը Կրօն. Ժողովոյ ընտրութեան համար եկած է հոս այս անգամ, նոյնպէս անկէ առաջ Քաղ. Ժողովոյ համար ալ կանոնադրական պատրաստեալ ցանկ մը եկած էր, միթէ կրնայի՞նք ըսել օրինակի համար թէ Ակոբճեան էֆ. ի պէս արժանաւոր անձի մը անուն կը պակսի այս ցանկին մէջ, ասոր համար չենք ընդունիր այս ցանկը: Թողունք զայս. թաղերուն մէջ համեմատական քուէարկութիւն կատարուած ատեն սահմանադրական պարտաւորութիւն է համեմատական ցանկէն դուրս անուան քուէ չտալ. եթէ աւելի արժանիք ունեցող անձին մէկը քուէից առաւելութիւն չունենալուն համար համեմատական ցանկէն դուրս է մնացեր, միթէ ժողովուրդը կրնա՞յ ձայն հանել և մերժել նոյն ցանկը պատճառելով թէ աւելի արժանիք ունեցող այս ինչ անձը դուրս մնացեր է: Ընդհանրապէս այս կերպով եկած ընտրելեաց ցանկերը չեն կրնար մերժուիլ. բայց պարագաներ ալ կան՝ որոնցմով կրնան մերժուիլ. եթէ այս ցանկին մէջ մատնիչ և ազգաւէր ճանչ-



ցուած եկեղեցականի մը անուն տեսնէինք, կրնայինք պարագայ մը համարել զայս դիտողութիւն ընելու ցանկին վրայ և չէ թէ ցանկը գլխովին մերժելու վասն զի մերժումն անսակ մը անպատուութիւն է Համ. Ժողովին ամբողջութեան, որոյ անդամոց անհնն ալ մեր պատուարժան հայրերն են:

(Անհամբերութեան ցոյցեր քուէարկութեան ձեռնարկելու համար)

ԲԱԶՄԱԹԻՒ ՁԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ՛

ԱՏԵՆԱՊԵՏՓԱՇԱ. — Խօսքին կարգն Խոմիկեան Մատթէոս սրբազանին է, որ խօսք առած է թերևս ի նպաստ Համ. Ժողովին խօսելու համար, բայց կը տեսնեմ որ միաբանութիւնը փակելու ցոյցեր կըլլան. ասոր համար նախ քուէի պիտի դնեմ իմանալու համար թէ Ժողովս ի՞նչ կամք ունի, կուզէ՞ արդեօք միաբանութիւնը շարունակել թէ ոչ:

Ձայն ըսելով Ատենապետ Փաշան քուէի դրաւ, և Խոմիկեան սրբազանէն զատ Ժողովը միաձայնաւ միաբանութեան փակումն ԸՆԴՈՒՆԵՑ և սոյնչափ անցնիլ Կրօն. Ժողովոյ ընտրութեան քուէարկութեանը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հիմա պիտի ձեռնարկենք Կրօն. Ժողովոյ ընտրութեան, պարտ է ինձ կրկին յիշեցունել թէ քուէարկութիւնս սահմանադրական է, այսինքն՝ Համ. Ժողովոյ կողմէն Ս. Պատրիարք Հօր ձեռօք մեզի ներկայացած պաշտօնական ցանկէն դուրս չենք կրնար ելնել: Գիտելու արժանի կէտ մըն ալ կայ, այն է թէ Կրօն. Ժողովոյ ընտրելեաց ցանկը քուէի չենք կրնար դնել, ինչպէս Քաղ. Ժողովոյ ընտրելեաց ցանկը քուէի դրինք, որովհետև մեր Կանոնադրութիւնն այս վերջնոյն համար կուտայ մեզ այդ իրաւունքը. բայց Կրօն. Ժողովոյ համար չունինք այդ իրաւունքը. միայն թէ Կրօն. Ժողովոյ ընտրելեաց ցանկին պատրաստութիւնն ինչպէս եղած ըլլալը տեղեկանալու համար Համ. Ժողովոյ կողմէն Ս. Պատրիարքին ուղղեալ պաշտօնական տեղեկագիրը կուզեմ կարդալ իբրև ծանօթութիւն, որ ահաւասիկ,

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր.

Ըստ հրաւիրանաց Բարձր. Սրբութեան Ձերոյ՝ Եկեղեցական Համագումար Ժողովն գումարելով յԱզգ. Պատրիարքարանի 'ի 25 Մայիս ամսոյ, Սահմանադրութեան 25րդ Յօդուածին տրամադրութեան համաձայն՝ Ազգ. Կրօնական Ժողովոյ եռապատիկ ընտրելեաց ցանկը պատրաստեց գաղտնի քուէարկութեամբ, որոյ օրինակն է հետևեալը.

| | | | |
|---|---|---|---|
| 1. Գեր. Տ. Մատթէոս | Ս. Եպիսկոպոս | Իզմիրլեանց | Քարոզիչ Ս. Կարապետ Եկեղեցւոյ յՈւսկիւտարու. |
| 2. Արժ. Տ. Խորէն | Վարդապետ | Մխիթարեան | » Պալատու. |
| 3. » Տ. Յուսիկ | » | Փափազեան | » Մէջիտիւղի. |
| 4. » Տ. Պօղոս | » | Խտըմեան | » Խասգիւղի. |
| 5. » Տ. Հմայեակ | » | Դիմաքսեան | » Էնի-գաբուի |
| 6. » Տ. Վահան | » | Տ. Մինասեան | » Էնի-մահալլէի Սամաթիոյ. |
| 7. » Տ. Եղիշէ | » | Այվազեան | » Գում-գաբուի դրսի. |
| 8. » Տ. Ստեփան | » | Արզումանեան | |
| 9. » Տ. Իգնատիոս | » | Տիրլէմեան. | |
| 10. » Տ. Մովսէս | » | Կիւմիւշեան Միաբան Ս. Երուսաղէմի. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 11. | Արժ. Տ. Պօղոս | Վարդապետ | Նախկին Բօսրայի Նորը-գաւառի. |
| 12. | » Տ. Գէորգ | Աւագ-քահանայ | Արծրունի ՚ի Խասգիւղ. |
| 13. | » Տ. Սահակ | » » | Տ. Սարգսեանց ՚ի Միջագիւղ. |
| 14. | » Յ. Արիստակէս | Քահանայ | ՚ի Գարակիւմրիւք. |
| 15. | » Տ. Խաչատուր | » | Տ. Գաբրիէլեան յԷնի-գաբու. |
| 16. | » Տ. Գաբրիէլ | Աւագ-քահանայ | Զիլէկճեան ՚ի Պէշիկթաշ. |
| 17. | » Տ. Պետրոս | Քահանայ | Փափազեան ՚ի Գուրու-չէշմէ. |
| 18. | » Տ. Խորէն | » | Փէշկիմճեան յՍկիւտար. |
| 19. | » Տ. Աթանաս | » | Ս. Խաչի յՍկիւտար. |
| 20. | » Տ. Զաքարիա | » | Բերայի. |
| 21. | » Տ. Գէորգ | » | Պալաթու. |
| 22. | » Տ. Իգնատիոս | Աւագ-քահանայ | Մանուկեան ՚ի Միջագիւղ. |
| 23. | » Տ. Սարգիս | Քահանայ | ՚ի Խասգիւղ. |
| 24. | » Տ. Գարեգին | » | Ս. Խաչի յՍկիւտար. |
| 25. | » Տ. Յովհաննէս | Աւագ-քահանայ | Ինի-մահալլէի յՍկիւտար. |
| 26. | » Տ. Յարութիւն | » » | Ղալաթիոյ. |
| 27. | » Տ. Մարգար | » » | ՚ի Գարակիւմրիւք. |
| 28. | » Տ. Աբրահամ | Քահանայ | Զամագրճեան ՚ի Ղալաթիա. |
| 29. | » Տ. Պօղոս | » | ՚ի Պոյաճի-գիւղ. |
| 30. | » Տ. Միքայէլ | » | ՚ի Պալաթ. |
| 31. | » Տ. Կարապետ | » | Սէթեան ՚ի Գուզկունճուգ. |
| 32. | » Տ. Կարապետ | » | ՚ի Պէշիկթաշ. |
| 33. | » Տ. Մեսրոպ | » | Ն. Ն. Երէցեան ՚ի Մայր-եկեղեցի. |
| 34. | » Տ. Թադէոս | » | ՚ի Սամաթիա. |
| 35. | » Տ. Յարութիւն | Աւագ-քահանայ | Պիւլճանճեան ՚ի Գատը-գիւղ. |
| 36. | » Տ. Վրթանէս | Քահանայ | ՚ի Գարակիւմրիւկ. |
| 37. | » Տ. Յովհաննէս | Աւագ-քահանայ | Մկրեան Պատր. Փոխանորդ. |
| 38. | » Տ. Արիստակէս | Քահանայ | ՚ի Միջագիւղ. |
| 39. | » Տ. Գրիգոր | Աւագ-քահանայ | Սէթեան ՚ի Գուզկունճուգ. |
| 40. | » Տ. Աթանաս | Քահանայ | ՚ի Մայր-եկեղեցի. |
| 41. | » Տ. Եղիշէ | » | » ». |
| 42. | » Տ. Անդրէաս | » | » ». |

Ի գիտաց Եկեղեցական Համագումար Ժողովոյ՝ Ձեր Բարձր Սրբազնութեան ներկայե-լով Ազգ. Կրօնական Ժողովոյ հաստատել ընտրելոց այն Տեղեկագիրը՝

Մնամ խորին յարգանօք

27 Մայիս 1876

Պատրիարքարան Հայոց

՚ի Կոստանդնուպոլիս

Դիւան Եկեղեց. Համագ. Ժողովոյ

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԲԶՆՈՒԿ ՎԱՐԴ. ՄԱՂԱՔԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊ. ՆԱՐ-ՊԷՅ



ԱՂԱՐԵԼԵԱՆ Ս. ԷՖ. Կարծեմ թէ ընտրելոց ցանկին համար առաջարկող չեղաւ որ քուէի դրուի։

ՍԻՒՐԷՆԵԱՆ Յ. ԷՖ. — Կհարցնեմ Դիւանին թէ ինչ է քուէի դնելիքը. պէտք է կանխաւ իմանանք։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քուէի դնելու բան մը չունինք, միայն թէ ընտրելոց ցանկին պատրաստութեան եղանակը կուզէի տեղեկացնել ժողովին, հանդիպելու համար թէ օրինաւորապէս պատրաստուած է այն, և ասոր համար կարդացի Համագումար Ժողովոյ տեղեկագիրը՝ յորում կպարունակէ պաշտօնական ցանկըն ընտրելոց։ Կմնայ այժմ քուէհամարի քննիչները պատրաստել և քուէարկութիւնը բանալ։

Այս միջոցին Ատենապետ փաշան Երեսփոխանաց ամենայն գիտութեան վրայ, փոխանակ Սրբազան Նախագահին, ինք չորս անուն քաշեց երեսփոխանաց անունները պարունակող տուփէն, որք քուէհամարի քննիչ կարգուեցան, և սոքա են.

Տ. Յարութիւն քահանայ Սերոբեան
Յարութիւն Էֆէնտի Մարգարեան
Սերովբէ » Պասմաճեան
Տիգրան » Ինկէրճեան

Անմիջապէս քուէարկութիւնն սկսաւ, և ներկայ երեսփոխանաց քուէթղթերն անուանական կոչման կարգաւ քուէատուփին մէջ զետեղուեցան։

Սրբազան Նախագահը, Ատենապետ փաշան և Պասմաճեան Սերովբէ էֆէնտին անուանական կոչման չքուէարկելով, ձեռնպահ գտնուեցան այն քուէարկութեան ատեն։

Նմանապէս Կիւմիւշկէրտան Տիգրան էֆէնտին ալ դուրս պատճառաւ չկրցաւ մասնակցիլ քուէարկութեան։

Քուէարկութեան աւարտէն ետև քուէ թղթերը համրուեցան, և քուէարկուաց թիւը 72 գտնուեցաւ։

Նոյն քուէհամարի գործողութիւնն սկսելով, քննչաց հսկողութեան ներքև շարունակուած միջոցին ատենապետ փաշան ժողովին ծանոյց որ եթէ քուէհամարի արդիւնքին նայելով Կրնայ. ժողովոյ ընտրութիւնն ամբողջովին բացարձակ քուէարկութեամբ չլինայ, և համեմատական քուէարկութեան հարկ ըլլայ, փոխանակ մինչև յաջորդ նիստ ձգելու ժողովոյ ընտրութիւնը, կարելի է համեմատական ընտրելոց ցուցակը նամակաւ երեսփոխանաց ղրկուիլ և իրենց քուէն ուղարկել կրնան. Ժողովոյ ընտրութիւնն ընդ փոյթ ամբողջացնելու համար։

Զայս լսելէ ետև Ատենապետ փաշան երբ մէկ կողմէ քուէհամարի գործողութիւնը կը շարունակուէր, միւս կողմէ ժողովին ուշադրութիւնը հրաւիրեց Օրակարգի երկրորդ խնդրին առաջ մատուցուելու փորձիկ հաշւոյ մը վրայ, որ է՝

1° Բողոք 5 երեսփոխանաց Սահմանադրութեան վերաքննութեան Ա. յօդուածոյ որոշման առթիւ յունուար 30 ի կատարուած քուէարկութեան դէմ, զոր ժողովը փետրուար 20 ի նստին մէջ նկատողութեան առնուլ որոշեց ըն-ունելով։

2° Բողոքագիր 14 եկեղեցական երեսփոխանաց ընդդէմ քուէարկելոյ Սահմանադրութեան Բ. ամփոփման, որոյ համար ժողովը 27 փետրուարի նստին մէջ որոշեց ատենագրութեան մէջ անցունել և վերաքննութեան խնդրոյն Օրակարգի օրը պէտք եղածն որոշել։

3° Բողոք 5 երեսփոխանաց փետրուար 20 ի նստին մէջ կատարուած քուէարկութեան դէմ, երեսփոխան չեղող Տ. Եղիշէ քահանային անոր մասնակցելուն պատճառաւ, զոր ժողովն որոշեց ատենագրութեան մէջ անցունել։

4° Բողոք Տ. Եղիշէ հօր ընդդէմ նախընթաց բողոքին։

Ասոնց ամենը մէկիկ կարդալու համար Ատենապետ փաշան ժողովոյ այս տարուան Բ. նստի ատենագրութեան 17 երեսին մէջ եղած խօսքն ու որոշումը յիշեցնելով առաջարկեց որ խառն յանձնաժողով մը 2 եկեղեցական և 2 աշխարհական անդամներով կազմուի և անոր յանձնուի քննել այս զանազան առաջարկներն՝ որոց հե-

մը մէկ է և միևնոյն խնդրոյ վրայ խորհրդակցելէ հետեւելով յառաջ եկած են, որպէս զի ժողովն այսպիսի մանր մունր գործոց զբաղելով, արգելուի իւր Օրակարգի խնդրոյն պատրաստելէ յաջորդ նստին։

ՔԱՋԱՋԵԱՆ Յ. ԷՖ. — Փոխանակ զատ մարմին մը կազմելու արդէն ընտրուած Նախաքննիչ դիւաններէն մէկուն որ կրնան կատարել անոր յղուիլ կառաջարկեմ։

ԽՈՍՈՒՓԵԱՆ Տ. ԷՖ. — Ես կըսեմ թէ Նախաձեռնութեան դիւանին յղուի, և եթէ վերջին կարօտութիւն ունենայ, այն ատեն մասնաւոր յանձնախումբ մը կազմուի։

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Այդ խնդիրը միայն Նախաձեռնութեան դիւանին չյղուիլ երթայ. այլ Նախաձեռնութեան և Ձեռնհասութեան միացեալ դիւանաց պէտք է յղել, զի 14 եկեղեցականաց բողոքն ու գիտութիւնը միայն Նախաձեռնութեան դիւանին քննութեան չ'են պատշաճիր։

Այն դիտողութիւններէն ետև Ատենապետ փաշան հետեւեալ քուէի դրաւ յիշեալ չորս բողոքագրերուն մասնաւոր յանձնախմբի մը և կամ Նախաձեռնութեան և Ձեռնհասութեան միացեալ դիւանաց քննութեան յանձնուելու խնդիրը և ժողովը քուէով վերջին կարծիքն ընդունեց։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն Նախաձեռնութեան և Ձեռնհասութեան միացեալ դիւանաց 6 անդամոց վրայ յանձնենք այս խնդիրը պարզել, որով ժողովն իւր յաջորդ նստին Օրակարգի խնդիրներուն կրնայ դառնալ։

Կը մնայ արդ՝ յաջորդ նստին օրն որոշել։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Երեսփոխան էֆէնտիներէն ոմանք կը խնդրեն որ ներկայ տաք օրերն անցնելու համար յաջորդ նիստն ոչ թէ 15 օրէն, այլ 22 օրէն գումարուի։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սաստիկ տաքերուն պատճառաւ մեզ փոքրիկ վականս մը տալու իրաւունք ունինք։ Ուրեմն յաջորդ նիստը 3 շաբաթէն ետև պիտի գումարուի, Օրակարգ ունենալով Սահմանադրութեան Վերաքննութիւնը։

ՈՒԹՈՒՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կարծեմ թէ յաջորդ նստի օրը Կրօն. ժողովոյ ընտրութեան քուէհամարի արդիւնքն իմանալէ ետև պէտք է որոշել։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քիչ մը առաջ ըսինք որ Կրօն. ժողովոյ ընտրութիւնն եթէ համեմատական քուէարկութեան մնայ, ատոր համար մասնաւոր նիստ գումարելու հարկ չկայ, այլ Խառնիւ կրնան ընտրուիլ միացեալ անդամները։

ՔԱՐԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Որոշում չեղաւ խօսք եղաւ միայն։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ աղէկ. քուէի կը դնեմ։

Հետեւապէս քուէի դրուելով ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱՒ որ եթէ Կրօն. ժողովոյ ընտրութեան կատարումը համեմատական քուէարկութեան կարօտի, առանց մասնաւոր նստի գումարման բացուելու, Խառնիւ ընտրուին միացեալ անդամները։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն համեմատական քուէարկութեան օրն և քուէհամարի քննիչներն ալ որոշել պէտք է. որպէս զի որոշեալ օր մը Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ կատարեն քուէարկութիւնն ու քուէհամարը։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Միայն դիւանին անդամոց ներկայութիւնը բաւական է, Ժողովս վստահութիւն ունի իւր դիւանին վրայ։

ՁԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դիւանին պարտաւորութիւնն է Ս. Հօր նախագահութեամբ, և եթէ կը հաճիք, մեր այս ատեն քննիչներու հսկողութեամբ քուէհամարը կատարել համեմատական քուէարկութեան օրն, որ առաջիկայ շաբթու մէջ կը սահմանենք որպէս զի Վարչութեան կազմութիւնն չը յապաղի։

Այս յայտարարութեան վրայ դիտողութիւն ընող չըլլալով, Ատենապետ Փաշան յանկեցուց բանը.



Բանի որ ինչ կարեւոր մէկ կէտ մը. Կ'առաջարկեմ Ս. Պատրիարք Հօր, որ հաճի տեղեկութիւն տալ Ժողովին թէ նորընտիր Քաղ. ժողովն իւր պաշտօնին հրաւիրուեցա՞ւ և իւր դիւանը կազմե՞ց։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Այո՛, նորընտիր Քաղ. ժողովն իւր պաշտօնին ձեռնարկած և իւր դիւանը կազմած է, ընտրելով Ագրօ էֆէնտին Ատենապետ և Շահպազ էֆ. Փոխ. Ատենապետ, նոյնպէս՝ Նուպար էֆէնտին Ատենադպիր և Պոյաճեան էֆ. Փոխ. Ատենադպիր։ Թէպէտև Նուպար էֆ. ի սկզբան հրաժարական գրած էր մեզ, սակայն հրաժարականը մերժելով խնդիր ըրինք որ ընդունի, և շնորհակալ եմ որ ընդունեց։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շնորհակալութիւն կը յայտնէ նաև Դիւանս յանուն Ժողովին և կը շնորհաւորէ նորընտիր Քաղ. ժողովոյ անդամներն ու դիւանը։

Միևնոյն ատեն կհամարի Դիւանը յիշեցնել Քաղ. ժողովին թէ բոլոր սահմանադրական ժողովոց մէջ օրէնք է և սովորութիւն է Վարչութեան հաշիւ և հաշուետուութիւն ընել երբեմն այս ինչ կամ այն ինչ խնդրոյ վրայ, հարկ է որ Վարչութիւնն ալ միշտ ներկայացուցիչ մ'ունենայ Ազգային ժողովոյ մէջ 'ի հարկին պատասխանելու և պաշտպանելու համար Վարչութեան արարքը. նախորդ Վարչութիւնը մեզ չ'կրցաւ կատարելապէս գոհ ընել այս մասին. բայց ներկայ Վարչութենէն ամենայն ինչ կ'յուսանք. ուստի կը խնդրեմ որ Ժողովիս ամեն նիստերուն ներկայ գտնուին Քաղաքական ժողովոյ ատենախօսները, որպէս զի հարցմանց և հարցապնդմանց պատասխանատուութիւնը դիւրաւ կատարուի։

ԱԳՐՕ Ս. ԷՖ. — Միթէ մեր որի՞ն կ'առանէր Ազգ. ժողովն հարցում և հարցապնդում ուղղել Վարչութեան. բայց հոգ չէ՛, ներկայ Վարչութիւնը յօժարամիտ է զայդ կատարել, և ձեր ուզած ներկայացուցիչը Քաղ. ժողովն որոշելէ ետև ցուցնել։ Քաղաքական ժողովը սիրով աշխատի Ազգ. Երեսփոխանութեան վստահութիւնն 'ի դերև չհանել. միայն կ'ենթադրէ Ազգ. ժողովէն աջակից ըլլալ իրեն և իր համակրութիւնը չզլանալ, որպէս զի անձուկ պարագայից մէջ կարող ըլլայ իւր պաշտօնը յաջողութեամբ կատարել։ Եթէ խնդիրներ պատահին՝ որոց վրայ հարկ ըլլայ Ժողովոյդ բացատրութիւն ուզել Վարչութենէն, պատրաստ է Վարչութիւնը հարկ եղած բացատրութիւնը չզլանալ բայց ժամանակին, բաւական է որ ըլլալիք հարցումները Ժողովոյդ կողմէն գան միաբանութեամբ և ոչ առանձնութեամբ։ Թէպէտ և այն պաշտօնը՝ զոր մեզ յանձնեցիք, ծանր է և դժուարատար, սակայն կյուսանք որ ձեր աջակցութեամբ պիտի կրնանք յաջողիլ և շարունակել. առանց այս պայմանին կարող չենք տանիլ և շարունակել մեր պաշտօնը։ Այս վստահութեան շնորհակալ ենք Ազգ. ժողովէն։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ազգային ժողովը նախորդ Վարչութեան օրով ալ հարցումներ ուղղեց Վարչութեան և հարցապնդումներ ըրաւ երբեմն. որոց Քաղաքական ժողովը ոչ կանուխ գրով և երբեմն բանիւ պատասխանեց. սակայն ամեն նիստի յանուն Քաղ. ժողովոյ խօսելու արտօնութեամբ ատենախօս չունեցանք մեր առջին։ Ուստի Ագրօ էֆէնտիի յայտարարութեանց 'ի պատասխան նորէն կկրկնեմ թէ այս անգամ ամենայն ինչ կյուսանք ներկայ Վարչութենէն. գալով այն խօսքին թէ ի՞նչ պայմաններով ներկայ Քաղ. ժողովն իւր պաշտօնն ընդունած է. փափաքելի է որ Քաղ. ժողովն ընդհանուր Ազգին պաշտօնապէս յայտարարէ թէ ի՛նչ ոգւով մտադիր է կատարել իւր պաշտօնը և ի՞նչ կ'սպասէ Ազգէն փոխարէն։

Կ'ընդհատեմ խօսքս կրկին շնորհակալութիւն յայտնելով 'ի դիմաց Ժողովիս նորընտիր Քաղ. ժողովոյ այն համակրական զգացմանց և յայտարարութեան համար, որով փոխադարձ սէր և աջակցութիւն կյուսայ գտնել Ազգային ժողովէն, և տարակոյս չունիմ որ Ազգային ժողովս ալ պիտի ճգնի փոխարինել Քաղ. ժողովոյ ջանից և վստահութեան, ճշգրտապէս կատարելով իր պարտքը որ է դիւրացնել Վարչական ժողովոյ պաշտօնավարութիւնը պէտք եղած օրինական կարգադրութիւններն ու վճիռներն չը զլանալով

և հսկել միանգամայն անոնց արտաքսումնեանց կատարմանը վրայ ։

Երկրորդ քուէարկի
Ընտրութեան կրօնական ժողովոյ

Ատենապետ Սրբազան Ատեանը գումարէ ու-տալ Կրօն. Ժողովոյ ընտրութեան համար որոշ մը առաջ եղած քուէհամարին աւարտած ըն-թացը ծանուցանելով, անոր արդիւնքն՝ որ ըն-ջաց կողմէ ատարագրեալ ձայնացուած էր Դի-ւանին, ներկայացուց և հրատարակեց ժողովին որ է՝

| | | | | Քուէ |
|---|---|---|---|---|
| 1. | Խորէն | Վարդ. | Մխիթարեան | 69 |
| 2. | Յակոբ | » | Փափազեան | 68 |
| 3. | Գաբրիէլ | Աւագ քհնյ | Զիչէքճեան | 64 |
| 4. | Յովհաննէս | » » | Մկրեան | 49 |
| 5. | Գէորգ | » » | Արծրունի | 48 |
| 6. | Արիստակէս | » » | Քաղաքէօղլի | 47 |
| 7. | Խաչատուր | » | Տ. Գաբրիէլեան | 47 |
| 8. | Պետրոս | » | Փափազեան | 46 |
| 9. | Աթանաս | քհնյ | Ս. Խաչ Հիւսեակ | 46 |
| 10. | Մեսրոպ | » | Երէցեան | 46 |
| 12. | Միքայէլ | » | Պօղոսու | 45 |
| 11. | Զաքարիա | » | Բերոյի | 45 |
| 13. | Իգնատիոս | Աւագ քհ | Մաղաքեան | 43 |
| 14. | Գրիգոր | » » | Սէթեան | 42 |

Ատենապետը փոխան յայտարարեց որ ընտրեալք միահաղոյն քուէից բացարձակ առա-ւելութիւն ստացած ըլլալով՝ օրինաւորապէս ընտրուած են, որով համեմատական քուէար-կութեան հարկ չէ մնացած ։

Հաստատեց սոյն ընտրութիւնը վաւերա-ցուց ժողովն, և ընտրեալք Կրօն. Ժողովոյ անդամ հռչակուեցան ։

Ատենը փակուեցաւ ժամը 9 1/2 ին ։

| ԱՏԵՆԱԴՊԻՐ | ԱՏԵՆԱՊԵՏ |
|---|---|
| Գ. Ց. ՄԵԼԻՔԵԱՆ | Ծ. ԱՍԼԱՆԵԱՆ |

---

## ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Խորէն | Վարդ. | Մխիթարեան |
| 2. | Յակոբ | Վարդ. | Փափազեան |
| 3. | Գէորգ | Ա. Ք. | Արծրունի |
| 4. | Գաբրիէլ | » » | Զիչէքճեան |
| 5. | Յովհաննէս | » » | Մկրեան |
| 6. | Արիստակէս | » » | Քաղաքէօղլի |
| 7. | Խաչատուր | » » | Տ. Գաբրիէլեան |
| 8. | Պետրոս | » » | Փափազեան |
| 9. | Աթանաս | քհնյ | Ս. Խաչ Հիւսեակ |
| 10. | Մեսրոպ | » | Երէցեան |
| 11. | Միքայէլ | » | Պօղոսու |
| 12. | Զաքարիա | » | Բերոյի |
| 13. | Իգնատիոս | Ա. Ք. | Մաղաքեան |
| 14. | Գրիգոր | » » | Սէթեան |

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Ապրօ | Սահակ | էֆէնտի | Ա. ԱՏԵՆԱՊԵՏ |
| 2. | Շահպազ | Կարապետ | » | Բ. » |
| 3. | Նուրեան | Յովհաննէս | » | Ա. ԱՏԵՆԱԴՊԻՐ |
| 4. | Պօյաճեան | Յովհաննէս | » | Բ. » |
| 5. | Նորատունկեան | Յակոբ | » | |
| 6. | Կիւլպէնկեան | Սերովբէ | » | |
| 7. | Լուսեան | Յովհաննէս | » | |
| 8. | Ազնաւուրեան | Յովհաննէս | » | |
| 9. | Սաքայեան | Աղեքսան | » | |
| 10. | Մարտուռեան | Սեպուհ | » | |
| 11. | Կրճիկեան | Անդրանիկ պէյ | | |
| 12. | Մարկոսեան | Գրիգոր | էֆէնտի | |
| 13. | Քաղաքեան | Յակոբ | » | |
| 14. | Ֆրէնկեան | Յակոբ | » | |

ԳԻՆ 2 ՂՐՕՒՇ

ՏՆՏԵՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՑԱՆԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի. և Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բակը և Հայ գրավաճառաց քով։